Մրտ. բձ. Ա. Անոխակալ Մնկ. և Հմբ.  
դկ. Ցիշատակ Քրիստոսի: Ժմտ. Հարս-  
նացեալք: Ճշ. շրկ. ակ. ի տաճարի  
հանգստեան:

Աշնանամուտ և հասարակած  
Տիւ և գիշեր հաւասար:

- 24 Գլ. ԲԶ. Պահե: Օրէ. Ապշ. րձ. Դարձու 20  
զցասումն: Հրց. Ապշ. զձ. Գ. Աղցմի.  
Օրհնեալ ևս Տէր և փառաւորեալ: Մնկ.  
րձ. Մանկունք Էկեղեցոյ: Ժմտ. Որ ըստ  
ամենայն: Ճշ. շրկ. դկ. Փառարանութիւն:  
Հմբ. րձ. Համրատնալով:
- 25 Եշ. ԲԿ. Պահե: Մըրոց հայրավեացն՝ 21  
Բարազամու, Անքիմսի և Երանոսի:  
Օրէ. Մըր. րկ. Շնորհեա մեզ Քրիստոս:  
Հրց. դձ. Գ. Որբ Հաղորդեցան: Մնկ. և  
Հմբ. դձ. Հանդիսացեալք: Ժմտ. Զհայրա-  
պետական: Ճշ. շրկ. դձ. Զառաչնորդս:
- 26 Ուր. ԳԶ. Պահե: Օրէ. Ապշ. դձ. Զերծու 22  
զիս: Հրց. Հնկ. րձ. Որ թագաւորդ ևս:  
Մնկ. Խաչի դձ. Քեզ Քրիստոսի կաթուղի-  
կէ: Ժմտ. Որ ըստ ամենայն: Ճշ. շրկ.  
րկ. Որ յանէից: Հմբ. դձ. Զօրհներգու-  
թիւնս և Պահապան: Խախատօնակ: Շրկ.  
ակ. Քաջամարտիկ (Տն՛ս ի Զայնազրեալ  
շարականի, յերես 912, ուր չիք՝ երգել  
շրկ. ակ. Ամենասուրբ Երրորդութեանն):

### ◆ Վերջին քառորդ լուսնի:

- 27 † Շբ. ԳԿ. Մըրոցն Գէորգայ քաջամար- 23  
տիկ գօրավարին, Արոկտոսի և Ռուման-

սի Երգեկոցին: Օրէ. ակ. Քաջամարտիկ  
կամ. ակ. Ամենասուրբ Երրորդութեանն:  
Հրց. դկ. Զինուորութիւնք: Մնկ. և Ճշ.  
դձ. Ովկ Սորբ Գէորգ: Ժմտ. Զօրական:  
Սրբ. Սրբութիւն սրբոց:  
Յերեկոյին՝ Լոյս զուարթի: Ս. Աստուած:  
որ խաչեցար: Հմբ. ակ. Նշանաւ ամենա-  
նազի: Քրդ. Ս. Խաչիս, Կեցո, Պահպա-  
նեա:

- Այսօր յերեկոյին Վեհափառ և  
Սրբազնագոյն Հայրապետն ազգին  
իշամէ ի Մայր Տաճարու  
մեծաշուր հանդիսի եկեղեցականաւ: 24  
28 † Կիր. ԳԶ. Գ. կիր. զկենի Մըրոց Խաչի: Ի տեղի  
Տօն է Վարազայ Մըրոյ Խաչի: Ի տեղի  
Հանգստեան շարականի՝ Այսօր անձառ և  
Տարածեալ: Աւտրն. Խաչելութեան: Ետզն  
ըմպել: Երգ՝ Տրտմահաղորդ: Օրէ. ակ.  
Նշանաւ ամենալազիթ, իւր սարօքն (յատ-  
եանն): Քրդ. Ասասցորք: Ս. Աստուած:  
որ խաչեցար: Աւտրն., Նորաստեղծեալ:  
Ս. Խաչիս, Կեցո, Պահպանեաւ: Ժմտ.  
Առաջի պատուական: Ճշ. շրկ. դձ. Քեզ  
Քրիստոսի: Սրբ. Ովկ է որպէս:

Երեսունմենկերորդ տարեդարձ օճման  
(2-ն հոկտեմբերի)

## S. S. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

Սրբազնագոյն Կաթողիկոսի  
և Ծայրագոյն Պատրիհարքի  
Ամենայն Հայոց:

Զկնի սրբոյ պատարագի կատարի  
մալթանը Հայրապետական  
յամենայն եկեղեցին Հայաստանեաց:

Ցերեկոյին՝ Ս. Աստուած՝ որ խաչեցար:  
Հմբ. գձ. Հրաշափառ տեսութիւն: Քրդ.  
Ս. Խաչիս, Կեցո, Պահպանեա:

Միջոց ուսիբն եօթն շաբաթ է:

29 Բ. Գ. Արքյան Դաւիթ Դմեցյան և 25  
սրբոց վկայիցն՝ Ղամբէսով և Ղամբէամ-  
տյն: Օրհ. Մրտ. դկ. ի յիշատակս վկա-  
յից: Հրց. Մրտ. բձ. Բ. Ընդ սորբոս քո:  
Մնկ. և Հմբ. բկ. Լցեալ Աստուածային:  
Ժմա. ի տաճարի: Ճշ. շրկ. դկ. Այսօր  
եկեղեցի Քրիստոսի:















30 Գ. Ա. Արքոցն Եւստարէսով և կնոջ 26  
նորա Թէղփիստեայ և երկու որդոցն, և  
սրբոց կոսանացն Երմոնեայ և նեխու-  
րինեալ: Օրհ. Մրտ. աձ. Ժողովեալքս ի  
յիշատակ: Հրց. Մրտ. բկ. Ա. Օրհնեմք  
դրեզ: Մնկ. աձ. Զնդնութիւն սրբոց:  
Ժմա. ի տաճարի: Ճշ. շրկ. աձ. Պար-  
եսոցին: Հմբ. աձ. Առաքինասէր վարուք:

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

(31 ՕՐ)



Կ Ը Բ Ո Ւ



1 Գ. Ա. Պահէ: Օրհ. ակ. Սով կինցա - 27  
զոյս: Հրց. Ապշ. գձ. Գ. Հարցն մերոց:  
Մնկ. ակ. Լոյս փառաց: Ժմա. Որ բատ  
ամենայն: Ճշ. շրկ. դկ. Փառարանոթիւն:  
Հմբ. ակ. Օգնական մեր լեր:

2 Եշ. Բ. Արքոց իշխանացն՝ Սահակայ և 28  
Համազասպայ: Օրհ. Մրտ. բձ. Օրհնեն  
դրեզ Աստուած: Հրց. Մրտ. բկ. Բ. Որք  
ի մարտի: Մնկ. և Հմբ. սով. դկ. Արփա-  
ցեալք: Ժմա. ի տաճարի: Ճշ. շրկ. բձ. Բրա-  
հիւախանան հրեշտակը:

- 3 Ուր. թկ. Պահիք: Օրէ. բկ. Յամենայն 29  
ժամ: Հրց. Հնգ. բկ. Արարիշ և մարզա-  
ստր. Մնկ. Խաչի բկ. Խաչն կենարար:  
Ժմտ. Որ բառ ամենայն: Ճշ. շրկ. դկ.  
Որ անսկիզբն: Հմբ. բկ. Յօդնութիւն մեղ:

● Ծնունդ լուսնի:

- 4 Նբ. ԳԶ. Արբոց եօրանասնից և երկուց 1  
աշակերտացն Քրիստոսի: Օրէ. դկ. Իմաս-  
տութիւն երկնային, իւր սարօրն: Ժմտ.  
Ասպարելք և վկայք: Ճշ. շրկ. ակ. Որ  
սիրող էք: Հմբ. աձ. Սուրբ ևս Տէր և ի  
քէն հայցեմք: Քրդ. Խնդր., Կեցո, Թագ.  
խաղաղութեան:

- 5 Դ Կիր. Գկ. Գ. կիր. զինի Ա. Խաչի: 2  
Օրէ. դկ. Երգեցէք Տեառն: Հրց. դձ. Բ.  
Որ բարերանեալդ ես: Մեծ. դձ. Աստուա-  
ծածին գերազյն: Ժմտ. Միածին Որդի:  
Ճշ. շրկ. դկ. Կուտով Աստուածութեան:  
Հմբ. դկ. Զրո յարութիւնդ:

- 6 Բշ. ԳԶ. Արբոց Փոկասու հայրապետին 3  
և եւանոսի հետեւդին առամելցն: Օրէ.  
Մրտ. դձ. Այսօր յիշատակ սրբոց: Հրց.  
Մրտ. դձ. Ա. Որք գտանջանս: Մնկ. դձ.  
Զրկ. կարդային: Ժմտ. ի տաճարի: Ճշ.  
շրկ. դձ. Ճգնութիւնք սրբոց: Հմբ. դձ.  
Յիշատակ և այսօր:

- 7 Գշ. Գկ. Արբոց կուանացն Թեկիի, 4  
վառլառեայ և Պեղիփայ: Օրէ. Մրտ.  
դկ. ի յիշատակս վկայից: Հրց. Մրտ. դձ.  
Ա. Յուսացեալքն: Մնկ. և Հմբ. դկ. Քե  
պարծի: Ժմտ. Հարսնացեալք: Ճշ. շրկ.  
դկ. Այսօր եկեղեցի Քրիստոսի:

- 8 Գշ. ԱԶ. Պահիք: Օրէ. Ապշ. աձ. Հայրը  
բազումողարմ: Հրց. դձ. Ե. Աղջմի. Օրէ-  
նեալ ևս Տէր... Որ հրաշալի: Մնկ. աձ.  
Ջառաւառութ: Ժմտ. Որ բառ ամենայն: Ճշ.  
շրկ. դկ. Փառարանութիւն: Հմբ. աձ. Ինձ  
օգնութիւն և Համբարձի:

- 9 Եշ. Ակ. Արբոցն Պանդալիոնի բժշկին, 6  
Երմաղեայ քահանային և Եպրախսեայ  
կուսին: Օրէ. Մրտ. ակ. Յամենայն ժամ:  
Հրց. Մրտ. դձ. Բ. Սուրբ ևս Տէր: Մնկ.  
և Հմբ. դկ. Յիշատակ Քրիստոսի: Ժմտ.  
ի տաճարի: Ճշ. շրկ. ակ. ի տաճարի  
հանգստեան:

- 10 Ուր. ԲԶ. Պահիք: Օրէ. Ապշ. բձ. Դարձո  
զցասումն: Հրց. Հնգ. դձ. Օրհնեմք զքեզ:  
Մնկ. Խաչի բձ. Ապւախնեցաք: Ժմտ. Որ  
բառ ամենայն: Ճշ. շրկ. դկ. Որ ան-  
սկիզբն: Հմբ. բձ. Համբառնալով:

● Առաջին քառորդ լուսնի:

- 11 Նբ. Բկ. Արբոց բարգմանշաց վարդա- 8  
պետացն մերոց՝ Մերովլայ, Եղիշեի,

Մովսիսի Քերըողին, Դաւթի Անյաղը փի-  
լիստիային, Գրգորի Նարեկացյան  
և Ներսիսի Կլայծացյան: Օրհ. ակ. Որբ զար-  
դարեցին, իւր սարօբն: Մնկ. գձ. Նմա-  
նեալ Մովսիսի (յոդնակի ասել): Ժմտ.  
Զհայրապետականն: Ճշ. շրկ. (Ողորմե-  
այն) գձ. Որ զջնորհն:

Յերեկոյին՝ կոյս զուարթ: Ս. Աստուած՝  
որ յարեար: Հմբ. աձ. Սուրբ ևս Տէր և  
Երկնաքաղաքցին: Խնդր., Կեցո, Թագ.  
Խաղաղութեան:

Տօն ազգային և եկեղեցական  
ի յիշատակ գիտի նշանագրացն հալոց  
և թարգմանութեան Սուրբ Գրոց:

12 † Կիր. ԳԶ. Ե. կիր. գկնի Ս. Խաչի: 9  
Օրհ. Յար. գձ. Օգնական ընդունելի: Հրց.  
գձ. Գ. Որ ի քառակերպեան: Մհե. գձ.  
Խորանայարկ: Ժմտ. Միաժին Որդի: Հմբ.  
գձ. Խւզարեր, Այսօր յարութիւն և ի խա-  
չանիշ:

13 ԲՀ. ԳԿ. Դիտ ճշխարաց Մրցյ Գրիգո-  
րիսի Աղուանից կաբողիկոսին և Մրցոց  
հաւցն՝ Թարլոյ, Վարոսի, Թումասու, Ան-  
տօնի, Կրօնինեայ և Եօրն խոտանարա-  
կացն, որք յիննակնեայ վասն կատարե-  
ցան: Օրհ. գկ. Արմատ ճշմարիտ (տե՛ս

բձ. Ավ երջանիկ): Հրց. զթուանցն ա-  
սա) ակ. Որ զլոյս Աստուածալին: Մնկ.  
դկ. Աստուածային հաւատոյ: Ժմտ. Զհայ-  
րապետականն և Ճգնաւորք Քրիստոսի:  
Ճշ. շրկ. գկ. Հովիւ քաջ: Հմբ. բձ. Յա-  
տրու վերջին ժամանակի:

14 Գշ. ԳԶ. Մրցոց առաքելոցն՝ Անանիայի, 11  
Մատքի, Բառնաքայ, Փիլադելփի, Յով-  
հաննու, Շիդայի և Սիմիանոսի: Օրհ. գկ.  
Խմաստութիւն Երկնային, իւր սարօբն:  
Մնկ. և Հմբ. ակ. Աշակերտք Քրիստոսի:  
Ժմտ. Առաքեալք և Վկայք: Ճշ. շրկ. ակ.  
Որ սիրողդ էք:

15 Գշ. Իկ. Պահիք: Օրհ. Ապշ. գկ. Քրիս- 12  
տոս Աստուած յոյս: Հրց. Ապշ. գձ. Զ.  
Օրհնեալ ևս Տէր... Վասն ուխտի: Մնկ.  
դկ. է անոն Տեառն: Ժմտ. Որ ըստ ա-  
յնան: Ճշ. շրկ. գկ. Փառաքանութիւն:  
Հմբ. գկ. Մատցեն ալօթք իմ:

16 Եշ. ԱԶ. Մրցոցն Դիմեսիոսի Արխապա- 13  
զացյան և առաքելոցն Տիմոքիոսի և  
Տիտոսի: Օրհ. գկ. Խմաստութիւն Երկնա-  
յին, իւր սարօբն: Մնկ. և Հմբ. ակ. Աշա-  
կերտք Քրիստոսի: Ժմտ. Առաքեալք և  
Վկայք: Ճշ. շրկ. ակ. Որ սիրողդ էք:

17 Ուր. ԱԿ. Պահիք: Օրհ. Ապշ. գկ. Սով- 14  
կենցաղոյս: Հրց. Հնդ. գկ. Բանդ Աստ-  
ուած: Մնկ. Խաչի ակ. Սիդան քո Տէր:

ժմտ. Որ բատ ամենայն: Ճշ. շրկ. դկ. Որ անսկիզբն: Հմբ. ակ. Օգնական մեր լւր:

○ Լրումն լուսնի:

18 Եր. ԲԶ. Արք ախտարանշացն՝ Մատ-  
թէսփ, Մարկոս, Ղոկասու և Յովեան-  
նու: Օրհ. դձ. Երանելի սորբ առաքեալք,  
իւր սարօքն: Մնկ. աձ. Այսօր նոր ժողո-  
վորդք: Մնկ. ակ. Աշակերտը Քրիստոսի:  
(դկ. տունն ասա՝ Փառք Հօր, իսկ Այժմ  
և միշտն՝ Բանին կենաց, յիշելով զանու-  
նըս աւետարանշացն): Զկնի Տէրն յետ  
ստեղծմանին երգ՝ Մաքրապէս օրինակի  
և Յուրախութիւնս անզրաւական: Ժմտ.  
Առաքեալք և Վկայք: Ճշ. շրկ. ակ. Որ  
սիրողդ էք:  
Յերեկոյին՝ լոյս զուարթ: Ս. Աստուած  
որ յարեար: Հմբ. աձ. Սուրբ հս Տէր և  
ի քին հայցիմք: Խնդրու, Կեցո, Թագ. խա-  
ղաղութեան:

19 + Կիր. ԲԿ. Զ. կիռ. զկնի Ս. Խաչի: 16  
Օրհ. բկ. Փարաւոն Հանդերձ: Հրց. Յար.  
դձ. Դ. Յորժամ ի խաչն: Մնկ. դձ.  
Մայր լուսոյ: Ժմտ. Միասին Որդի: Ճշ.  
շրկ. բկ. Օրհնութիւն ի բարձոնս: Հմբ.  
բկ. Քրիստոս յարեար և Աստուածան:

20 Բշ. ԳԶ. Արքոցն Ղունկիանոսի հարի-  
րավետին, որ հաւատաց ի խաչելուրիւնն  
Քրիստոսի և Յովեսիայ աստուածահօրն.  
Յովեսիայ Արեմարացտյն և բարեկամին  
Քրիստոսի Ղազարու և քերցն նորա Մար-  
քայի և Մարիամու: Օրհ. դկ. Իմաստու-  
թիւն երկնային, իւր սարօքն: Մնկ. ստղ.  
դկ. Յովեսիփ քեզ Հաւատացեալը: (Երկ.  
1888 թ. էջ 201): Ժմտ. Առաքեալք և  
վկայք: Ճշ. շրկ. դձ. Յովեսիփ ճշմարիտ:  
Հմբ. դկ. Իւղաբերից կանանցն:

21 Գշ. ԳԱ. Արքոցն Թէոդիտոնի բահանա-  
յին, Զենոնի զինատրին, Մակարայ, Եւ-  
ոնիսեայ և Ռամելայ: Օրհ. Մրտ. դկ.  
Այսօր Հրեշտակաց դասքն: Հրց. Մրտ.  
դկ. Ա. Առ քեզ Աստուած: Մնկ. դկ. Ընդ  
դուարիթոննա Ժմտ. Ի տաճարի: Ճշ. շրկ.  
դկ. Ճշնաւորը ճշմարիտը: Հմբ. դկ. Այս-  
օր մարտիրոսաց:

22 Գշ. ԳԶ. Պահէ: Օրհ. դձ. Համբառնամ: 19  
Հրց. Ապշ. դկ. Ա. Ազգմի. Սուրբ Աստ-  
ուած Հայր: Մնկ. դձ. Մանկոնք զՏէր:  
Ժմտ. Որ բատ ամենայն: Ճշ. շրկ. դկ.  
Փաստանութիւն: Հմբ. դձ. Զքեզ կար-  
դամք:

23 Եշ. ԳԱ. Արքոց Խարիքանցն և սրբոց 20  
վկայիցն Արտեմիայ և Քրիստափորի և  
Երկու կանանցն Կալինիկեայ և Ակի-

- լինեայ: Օրհ. Մրտ. դկ. ի յիշատակս  
վկայից: Հրց. Մրտ. դկ. թ. Որ զբաշա-  
փառ: Մնկ. և Հմբ. դկ. Այսօր ընդ ան-  
մամուցն (Հատուկ): Ժմտ. ի տաճարի:  
Ճշ. շրկ. դկ. Այսօր եկեղեցի Քրիստոսի:
- 24 Ուր. ԱԶ. Պահիք: Օրհ. Ապշ. աձ. Հայր 21  
բազումողորմ: Հրց. Հնդ. դձ. Որ փառօք  
Հօր: Մնկ. Խաչի աձ. Սուրբ Խաչն օգ-  
նական: Ժմտ. Որ բատ ամենայն: Ճշ.  
շրկ. դկ. Որ անսկիզբն: Հմբ. աձ. Ինձ  
օգնութիւն և Համբարձի:
- 25 Շր. ԱԿ. Մրցոց Խելատանից վարդա- 22  
պիտացն՝ Ռեքոսի, Գիոնէխիսի, Սեղ-  
րեսուրոսի, Արանասի, Կիւրդի Երուսա-  
ղիմացոյն, Եփեմի Խուրոյ, Ասուրյ,  
Բարսի Կեսարացոյն, Գրիգորի Նիսաց-  
ոյն, Գրիգորի Աստուածաբանին, Եպի-  
փանու Կիպրացոյն, Յովենանու Ռաքե-  
րանին և Կիւրդի Ալեքսանդրացոյն: Օրհ.  
ակ. Որք զարդարեցին, իւր սարօքն: Մնկ.  
դձ. Հանդիսացնալք: Ժմտ. Զհայրապե-  
տականն (յոզնակի տսել): Ճշ. շրկ. դձ.  
Այսօր երկնայնոցն:
- Յերեկոյին՝ կոյս գուարի՛: Ս. Աստուած՝  
որ խաչեցար: Հմբ. աձ. Հրաշակերտ  
(լատեանն): Քրդ. Ս. Խաչիս, Կեցու,  
Պահպանիս:

- 26 Դ Կիր. ԹԶ. Է. Կիր. զկնի Ս. Խաչի: 23  
Կիսա Խաչի: Ի տեղի Հանգստեան շարա-  
կանի՝ Այսօր անձառ և Տարածեալ:  
Աւարն. Խաչլութեան: Ետուն ըմպել:  
Երկ. Տրտմահաղորդ: Օրհ. աձ. Հրաշա-  
կերտ և զօրեղ, իւր սարօքն (յատեանն):  
Յորժամ Երգեցին զի՞ տունն Հարցի  
խնկարկեսցն Սեղանայն և ժողովրդեանն:  
Ս. Աստուած՝ որ խաչեցար: Ժմտ. Առա-  
չի պատուական: Ճշ. շրկ. բձ. Այսօր  
խնդրի: Սոր. Ով է որպէս:  
Յերեկոյին՝ Ս. Աստուած՝ որ խաչեցար:  
Հմբ. բձ. Ապաւինեցար: Քրդ. Ս. Խաչիս,  
Կեցու, Պահպանիս:


### ◆ Վերջին քառորդ լուսնի:

- 27 ԲՀ. ԲԱ. Մրցոցն Անաստասյ յահանա- 24  
յին, և Վարոսի և Թէղորիտեայ և որդ-  
յաց նորա, և որք ընդ նմա կատարեցան:  
Օրհ. Մրտ. բկ. Շնորհեա մեզ Քրիստոս:  
Հրց. Մրտ. աձ. Զքեզ արդար: Մնկ. բկ.  
ի փառ պարծեցին: Ժմտ. ի տաճարի:  
Ճշ. շրկ. բկ. Հրաշափառ ճգնութեամբ:  
Հմբ. բկ. Որ պսակիշգ ես:
- 28 ԳՀ. ԳԶ. Մրցոց Հիպիրիքեանցն, որք ի 25  
Սամուած կատարեցան, և Մրցոցն Սեղ-  
իանոսի Սեբաստացոյն, և Բաբելայ ծե-  
րոյն, և ուրսուն և շորից աշակերտաց

- նորին: Օրհ. դձ. Զարիական մահ: Հրց.  
Մոտ. ակ. Սովոր Աստուած արարիչ: Մնկ.  
դձ. Այսօր լիշտակ սրբոց: Ժմտ. ի  
տաճարի: Ճշ. շրկ. դձ. Պայծառացիր  
և կեղծիցի: Հմբ. դձ. Զալսակիչն սրբոց:  
29 Պշ. Գլ. Պահէ: Օրհ. գկ. Քրիստոս 26  
Աստուած աստուեցոց: Հրց. Ապշ. գկ. Բ.  
Աստուած բարձրիալ: Մնկ. գկ. Օրհնե-  
ցիք զՏէր: Ժմտ. Որ ըստ ամենայն: Ճշ.  
շրկ. գկ. Փառաբանութիւն: Հմբ. գկ.  
Տուր մեկ Տէր և Հովանի աշոյ:  
30 Եշ. ՊԶ. Արրյն Յովիանեն Ոսկերեան 27  
Հայրապետին: Օրհ. ակ. Որբ զարգարե-  
ցին, իւր սարօբն: Մնկ. և Հմբ. ստղ.  
գկ. Որ յանսկիզբն ի Հօրէ: Ժմտ. Զհայ-  
րապետականն: Ճշ. շրկ. դձ. Զառաջ-  
նորդն և զվարդապետու:  
31 Ուր. ՊԽ. Պահէ: Օրհ. Ապշ. գկ. Քրիս-  
տոս Աստուած յոյս: Հրց. Հնգ. գկ. Յափի-  
տենից Աստուած: Մնկ. Խաչի գկ. Խաչի  
քռ Քրիստոս: Ժմտ. Որ ըստ ամենայն:  
Ճշ. շրկ. գկ. Որ անսկիզբն: Հմբ. գկ.  
Մտցին աղօթք իմ:

## ՆՈՅԵՄԲԵՐ

(ՅՈ ՕՐ)



1 Նբ. ԱԶ. Տօն ամենայն սրբոց՝ հինգ և 29  
նորոց, յայտնից և անյայտից: Օրհ. դձ.  
Երանելի սուրբ առաքեալց: Հրց. գկ. Ա.  
Առ քեզ Աստուած: Մհծ. գկ. Նահապե-  
տացն: Ողորմեա (Մարգարէից)՝ դձ. Որ  
աւետառոր քում: Տէր իւրկ. (Վարդապե-  
տաց)՝ դձ. Այսօր երկնայնոցն: Քարոզք՝  
Աստուած մհծ, Առաջնորդք եղեն և  
Զհգնութիւն: Մնկ. գկ. (Կուսանաց)՝ Յի-  
շատակ Քրիստոսը և (Մարտիրոսաց)՝  
գկ. Որբ եկեալ եմբ: Ժմտ. Բարեխօսու-

- թեամբ սրբուհոյ: Ճշ. շրկ. բձ. Պար-  
ծանք եկեղեցոյն (Թագաւորացն), Աստ-  
ուած փրկիչ մեր: 3  
Յերեկոյին՝ Լոյս զուարթ: Ս. Աստուած  
որ յարեար: Հմբ. աձ. Սուլր ևս Տէր և  
Երկնաքաղաքացին:
- 2 ♦ Կիր. Ակ. Ք. կիր. զինի Ս. Խաչի: 30  
Օրհ. ակ. Երգեցէր Տեառն: Հրց. դկ. Ա.  
Որ զամենազօր: Մեծ. դկ. Աստուածածին  
Մայր և Կոյս: Ժմտ. Միաժին Օրդի: Ճշ.  
շրկ. ակ. Թագաւորեաց Աստուած: Հմբ.  
ակ. Սքանչելի Հրեշտակն:
- Ծնունդ լուսնի:
- 3 Թշ. ԹԶ. Սրբոցն՝ Խտեփաննսի Հռով-  
մայ Հայրապետին, և Քանաճայիցն, և  
սարկաւազն, և ժողովրդոց: Օրհ. բձ.  
Օրհնեն զքեզ: Հրց. Մրտ. ակ. Բ. Որ  
բարձրեալդ ես: Մնկ. դձ. Յնծայ այսօր:  
Ժմտ. Զհայրապետականն: Ճշ. շրկ. դձ.  
Զառաջնորդու: Հմբ. դկ. Մարտիրոս և  
Վկայ:
- 4 Գշ. թկ. Սրբոցն՝ Ակիփսիմեայ եպիսկո-  
պոսին և Յովսեփայ Քանաճային, Այի-  
քայայ սարկաւազին և Պղատոնի վկային:  
Օրհ. բկ. Շնորհեա մեզ Քրիստոս: Հրց.  
Մրտ. բձ. Ա. Անոխակալ: Մնկ. բկ. Ի  
փառս պարծեսցին: Ժմտ. ի տաճարի:

Ճշ. շրկ. բկ. Հրաշափառ ճգնութեամբ:  
Հմբ. բկ. Որ պսակիւդ ես:  
Գշ. ԳԶ. Պահեմ: Օրհ. Ապշ. դձ. Զերծու  
զիս: Հրց. Ապշ. դձ. Ա. Հարցն մերոց  
Աստուած... Երգին: Մնկ. դձ. Զքեզ  
բարերաննն: Ժմտ. Որ ըստ ամենայն: Ճշ.  
յրկ. դկ. Փառարանութիւն: Հմբ. դձ.  
Զօրհներգութիւնն: և Պահապան:

Եշ. ԳԿ. Սրբոց Խայրապետացն՝ Մետր-  
փանսի, Աղէքսանդրոսի և Պօղոսի իսո-  
տովանոյին և սրբոց Խօսաւացն Մար-  
կիսնոսի և Մարտիրոնի: Օրհ. դկ. Այս-  
որ Հրեշտակաց զաւրն: Հրց. Մրտ. դձ.  
Դ. Որբ Հաղորդեցան: Մնկ. դձ. Այսոր  
Երկնայնցն: Ժմտ. Զհայրապետականն:  
Ճշ. շրկ. դձ. Զառաջնորդու: Հմբ. դձ.  
Հանդիսացեալք:

Ուր. ԳԶ. Պահեմ: Օրհ. դձ. Համբառնամ: 5

Հրց. աձ. Օրհնեալ ես զու: Մնկ. դձ. Գա-  
լապան զօրութեան: Հմբ. դձ. Զքեզ կար-  
պամբ: Խախատօնակ: Շրկ. բկ. Որ յա-  
նից, իւր սարօն (յատեանն): Քրո. Ս.  
Ճգնաւորօնն: Աղթ. Տէր Աստուած միր,  
որ կարգեցեր (տե՛ս ի Խորհրդատերի):

† Նր. ԳԿ. Սրբոց Երեշտակապետացն՝ 6  
Կորդիկի և Միքայէլի և ամենայն Երկ-  
նային զօրացն: Զկնի Աստուած անեղին

երգ՝ Դասք անմարմնոցն (ի մէջ Արարականի): Օրհ. թկ. Որ յանէից ստեղծեր, իւր սարօֆն (յատեան): Ալէլով Հրշագուկապետաց՝ Ո արար, փոխ՝ Օրհնեցէք զՏէր, ապա Թասք հրեշտակաց և թագ. յախտ: Երկինք և երկիր: Սեծ. պկ. Մայր և Կոյս: Քրդ. Աստուած մեծ: Մնկ. ստղ. դկ. Երկնաւոր հօտ: Ժմտ. Զորօհնեն և Այսօր երկրատրու: Ճշ. շրկ. դկ. Այսօր ուրախացեալ:

Յերեկոյին՝ լոյս զուարթ: Ս. Աստուած որ յարեար: Ճմբ. աձ. Սուրբ և Տէր և Երկնարաջացին: Այժմ և միշտն ասել աձ. Այսօր և հրեշտակք (տե՛ս ի Զայնապեալ շեալ շարականի յերես 761, ի մէջ ոգուալ շարականի նաւակատեաց սրբոյ խաչի, դորմեայի նաւակատեաց սրբոյ խաչի, Զայնքաղ շարական տպ. 1888 յերես 366): Խնդր., Կեցո, թագ. Խաղաղութեան:

9 † Կիր. Ա. Թ. Կիր. զինի Ս. Խաչ: Օրհ. աձ. Երգեցցուք երգ նոր: Հրց. Ցար. Բ. Այսօր ցնծան: Սեծ. դկ. Աստուածածին պայծառ: Ժմտ. Միածին Որդի: Ճշ. շրկ. աձ. Զթագաւորն փառաց: Ճմբ. աձ. Ընդ կանայսն և Որ անճառ:

❶ Առաջին քառորդ լուսնի:

10 Բ. Ա. Սրբոցն՝ Մելիտոսի Անտիոքանացին և Մինասայ Եղիպատացոյն

և միւս Մելիտոսի եպիսկոպոսին, Թուրայ Էմանային և Ենիու սարկաւագին: Օրհ. ակ. Յամենայն ժամ օրհնեմք: Հրց. Մրտ. թձ. Բ. Ընդ սուզրս քո: Մնկ. ակ. Ճրգանարք Քրիստոսի ժմտ. Զհայրապետականն: Ճշ. շրկ. գձ. Զառաջնորդս: Ճմբ. ակ. Պարծանք հաւատոյ:

Գլ. ԳԶ. Սրբոցն Խեմետրեայ վկային և 9 Բասիլիսկոսի բանանային: Օրհ. թձ. Օրհնենք զքեզ Աստուած: Հրց. Մրտ. թկ. Ա.

Օրհնեմք զքեզ: Մնկ. թձ. Փառաւորեալդ փառօք ի տաճարի: Ճշ. շրկ. թձ. Ուրախանան հրեշտակք: Ճմբ. թձ. Զքեզ Տէր օրհնեն:

Գլ. թկ. Պահեմ: Օրհ. թկ. Յամենայն 10 ժամ: Հրց. Ապշ. դձ. Բ. Հարցն մերոց... Յալթող: Մնկ. թկ. Արթունք և պատրաստք: Ժմտ. Որ ըստ ամենայն: Ճշ. շրկ. դձ. Փառաբանութին: Ճմբ. թկ. Յօնութին մեզ:

Ել. ԳԶ. Սրբոցն՝ Գուրիասայ, Սամունասայ, Արիբայ սարկաւագին, Խոմանոսի միայնակեցին, Մանկանն Խոստովանողի և Հիսակոսի զինաւրին: Օրհ. Մրտ. գձ. Զարիական մահ սրբոց: Հրց. Մրտ. թկ.

թ. Որք ի մարտի: Մնկ. գձ. Այսօր յիշատակ: Ժմտ. ի տաճարի: Ճշ. շրկ. դձ. Պայծառացիր եկեղեցի: Ճմբ. դձ. Զպսակին սրբոց:

- 14 Աւ. ԳԿ. Պահից: Օրհ. գկ. Քրիստոս Աստուած աստուծոց: Հրց. Հնկ. ակ. Դուհաբնեմք: Մնկ. Խաչի գկ. Ով պահապան: Ժմտ. Որ ըստ ամենայն: Ճշ. շրկ. գկ. Որ անսկիզբն յէռթեան: Հմբ. գկ. Տուր մեզ Տէր և Հովանի աշոյ:
- 15 Շր. ԳԶ. Մրցոց առաքելոցն Անդրէի և Փիլիպպասի: Օրհ. գկ. Երանելի սուրբ առաքեալք, իւր սարօքն: Մնկ. ակ. Աշակերտք Քրիստոսի: Ժմտ. Առաքեալք և Վկայք: Ճշ. շրկ. ակ. Որ սիրողդ էք: Հմբ. աձ. Սուրբ ես Տէր և ի քէն հայցեմք:
- 16 † Կիր. ԳԿ. Ժ. Լիր. զիկի Ս. Խաչի: Օրհ. գկ. Ցաղթական քեզ: Հրց. աձ. Ա. Որ եկիր ի քրկութիւն: Ժմտ. Միհածին Որդի: Ճշ. շրկ. գկ. Որ անրաւելի: Հմբ. գկ. Հրեհտակ ք Տէր (ցվերն):
- Բարեկենդան Յիսոնակի պահոցն:

○ Լրտեմն լրտեմն:

- 17 Եշ. ԱԶ. Ս. օր Յիսոնակաց պահոց: Օրհ. աձ. Հայր բազումողորմ: Հրց. Ապշ. դժ. Գ. Աղցմի. Օրհնեալ հս: Մնկ. աձ. Ջառաւոտու զօր ներգութիւնս: Ժմտ. Որ ի Հօրէ: Ճշ. շրկ. գձ. Քրիստոս Աստուած յիշեա: Հմբ. աձ. Ինձ օգնութիւն և Համբարձիք:

- 18 Գշ. ԱԿ. Բ. օր Յիսոնակաց պահոց: Օրհ. ակ. Մով կենցաղոյս: Հրց. Ապշ. դժ. Գ. Որ յամենայնի ցուցեր: Մնկ. ակ. Լոյս փառաց: Ժմտ. Որ ի Հօրէ: Ճշ. շրկ. գձ. Քրիստոս Աստուած յիշեա: Հմբ. ակ. Օգնական մեր լեր Տէր:
- 19 Գշ. ԲԶ. Գ. օր Յիսոնակաց պահոց: Օրհ. րժ. Դարձն ցցասումն: Հրց. Ապշ. դժ. Ե. Ճշմարտապէս: Մնկ. րժ. Մանկունք և կեղցւյոց: Ժմտ. Որ ըստ ամենայն: Ճշ. շրկ. գկ. Փառաբանութիւն: Հմբ. րժ. Համբառնալով:
- 20 Եշ. ԲԿ. Գ. օր Յիսոնակաց պահոց: Օրհ. բշ. Յամենայն ժամ: Հրց. Ապշ. դժ. Զ. Տէր Աստուած մեր: Մնկ. բկ. Արթունք և պատրաստք: Ժմտ. Որ ի Հօրէ: Ճշ. շրկ. գձ. Քրիստոս Աստուած յիշեա: Հմբ. բկ. Յօգնութիւն մեզ: Նախատօնակ: Շրկ. ակ. Որ նախիմաց, իւր սարօքն: Քրզ. Ս. զԱստ., Կեցո, Բնկալ Տէր:

- † Ուր. ԳԶ. Ե. օր Յիսոնակաց պահոց: Օրհ. Բնձայումն Սուրբ Աստուածածին երից ամաց ի Տանարեն: Զկնի Ուահ գործեալին երգ՝ Զայնիւ առ քեզ: Օրհ. գկ. Երգեցէք որդիք, իւր սարօքն: Քրզ. Մայր Սուրբ: Ա. Աստուած՝ որ խաչեցար: Զհանգուրծիւլ: Ա. զԱստ., Կեցո, Բնկալ Տէր:

Ժմտ. Աստուածածին զքեզ խոստովանիմք: Ճշկ. շրկ. դկ. Ծառ կենաց: Սրբ. Բազմութիւնք:

Յերեկոյին՝ Քրի. Մայր Սուրբ: Ս. Աստուած՝ որ խաչեցար: Հմբ. դձ. Նոր Սիովն ծնեալ: Ս. զԱստ., Կեցո, Բնկալ Տէր:

22 Եր. ԳԿ. Սրբոց Գրիգորի Սբանչելացործին, Նիկողայոսի հայրապետին և Միտոնայ եպիսկոպոսին: Օրհ. ակ. Որք զարդարեցին, իւր սարօքն: Մնկ. և Ճշրձ. Որ լուսով: Ժմտ. Զհայրապետականն: Հմբ. աձ. Սուրբ և Տէը և Երկնարապետացին:

23 † Կիր. ԴԶ. Ա. Կիր. Յիսոնակաց: Օրհ. դձ. Օրհնեսցուք զՏէր և Վլաղթող: Հրցաձ. Գ. Օրհնեալ և Տէր: Ժմտ. Սիածին Որդի: Ճշկ. շրկ. դձ. Քապաւոր Քրիստոս: Հմբ. դձ. Ահազին և Որ ի վերդ ես:

24 ԲՀ. ԴԿ. Սրբոց Կուսանացն՝ Յուփանեայ և Վասիլինայ: Օրհ. Մրտ. դկ. Ի յիշատակս վկայից: Հրց. դձ. Որք ըզտանչանս: Մնկ. և Հմբ. դկ. Յիշատակ Քրիստոսի: Ժմտ. Զարսնացեալք: Ճշկ. շրկ. Այսօր եկեղեցի:

◆ Վերջին քառորդ լուսնի:

Յ ԳՀ. Սրբոյն Ղունկիանոսի ժամանակին և սրբոցն՝ Տարագոսի, Պրօպոսի, Անդրոնիկոսի, Ռնեսիմեայ և այլոց աշակերտացն Սրբոյն Պօղոսի: Օրհ. դկ. Իմաստութիւն երկնային, իւր սարօքն: Մնկ. և Հմբ. ակ. Աշակերտք Քրիստոսի: Ժմտ. Առաքեալք և Վկայք: Ճշկ. շրկ. ակ.

Որ սիրողդ էք: Կիր. Պահմ: Օրհ. Ապշ. ակ. Ծով 24 Կինցաղոյս: Հրց. Ապշ. դձ. է. Աղջմի. Որ զերիս: Մնկ. ակ. Լուս փառաց: Ժմտ. Որ լսու ամենայն: Ճշկ. շրկ. դկ. Փատարապետին: Հմբ. ակ. Օգնական մեր լեր Տէր:

Եշ. ԲԶ. Սրբոց՝ Կղեմայ հայրապետին 25 և Բազարատայ Տոռոմենյ եպիսկոպոսին: Օրհ. Մրտ. բձ. Օրհնեն զքեզ Աստուած: Հրց. Մրտ. դձ. Բ. Որ զանշափ: Մնկ. և Հմբ. դձ. Մանկունք նոր Սիովնի: Ժմտ. Զհայրապետականն: Ճշկ. շրկ. դձ. Զառաքնորդու:

Ուր. ԲԱ. Պահմ: Օրհ. բկ. Յամենայն 26 ժամ: Հրց. Հնկ. բկ. Արարիչ: Մնկ. Խաչի բկ. Խաչն կենարար: Ժմտ. Որ լսու ամենայն: Ճշկ. շրկ. դկ. Որ անսկիզն: Հմբ. բկ. Յօգնութիւն մեզ ժամանահ: Խախտօնակ: Երկ. դձ. Երանելի սուրբ առաքեալք, իւր սարօքն: Ս. Ճգնաւրօքն: Աղմ. Որ ընտրեցիր:

- 29 ՚ Եր. ԳԶ. Տօն Մըրոց Առաքելոցն և Հառաշին լրաստշացն մերոց Թագիւսի և Թարդումիմէոսի: Օրհ. զձ. Երանելի սուրբ առաքեալք, իւր ապօքն: Թագ. յաւիտ.՝ Այսօր զասք: Մնկ. ակ. Աշակերտք Քրիստոսի (Փառք Հօր զԳ. տունն ասել, իսկ Այժմ և միշտն՝ Հայրատունկ այգոյն, յիշելով զանունսն առաքելոցն (Տ՛ս ի Զայնագրեալ շարականի, յերես 166 ի մէջ շարականի երկուտասան առաքելոցն, Զայնքաղ շարական տպ. 1888 յերես 78): Ժմտ. Առաքեալք և վկայք: Ճշ. շրկ. ակ. Որ սիրողդ էք:
- Ցերեկոյին՝ Լոյս զուարթ: Ս. Աստուած՝ որ յարեար: Հմբ. աձ. Սուրբ ես Տէր և ի քէն հայցեմք: Խնդր., Կեցո, Թագ. խաղաղութեան:

66-րդ տարեթարձ Հայաստանում  
Սովորական կարգերի հաստատման:  
Կառավարական մատլանք:

- 30 ՚ Կիր. ԳԱ. Բ. Կիր. Յիսոնակաց: Օրհ. 28 գկ. Երգեցէք Տեսոն: Հրց. Յար. ակ. Գ. Անսկիգրն րանդ: Ժմտ. Միածին Որդի: Ճշ. շրկ. գկ. Լուսով Աստուածութեան: Հմբ. գկ. Գ. Առեալ և մեր:



Աստուածամայրը մանկան նևու:  
(Նկ. Յովնաթան Յովնաթանեան XVIII դ.):



Ս. Թաղենու առաքեալ:  
(Նկ. Ստեփաննոս Ահմաջի XVII դար):

## ԴԵԿԱՏԵՄԲԵՐ

(31 ՕՐ)



Ա. ՂԵՊՆ Ա. ԽՈՐՆ

1 Բ. Դ. Մըրոցն Գենարիոսի եպիսկոպոսին, Մերկերիոսի գիեատրին, Յակովկայ և Երամափառայ: Օրհ. Մըրտ. գձ. Արարտ յիշարտակ սրբոց: Հրց. Մըրտ. գկ. Զինուորութիւնք: Մնկ. և Հմբ. աճ. Զինաւորն Քրիստոսի: Ժմտ. Զօրական: Ճշ. Մրկ. գճ. Ճկնութիւնք սրբոց:

❷ Ծնունդ լուսնի:

2 Գ. Դ. Մըրոցն Կոտենէլիոսի հարիւրավետին, և Նմատօնի ազգականն Քրիստոսի՝ որ խաչեցաւ յերուաղէմ, Պողի-

- կարպոսի հայրապետին Զմիւնիոյ և  
սրբոց վկայիցն, որք յԱրելս կատարե-  
ցան: Օրհ. Մրտ. դկ. ի յիշատակու Հրց.  
դկ. (Յօթանասինիցն) Որ ի Հօրէ առաքե-  
ցար: Մնկ. և Հմբ. ակ. Աշակերտք  
Քրիստոսի: Ժմտ. Առաքեալք: Ճշ. շրկ.  
ակ. Որ սիրողդ էք:
- 3 Դշ. ԱԶ. Պահէ: Օրհ. Ապշ. աձ. Հայր 2  
բազումողորմ: Հրց. դկ. Ա. Աստուած  
Հարցն: Մնկ. աձ. Զառաւօտու զօրհներ-  
գութիւնս: Ժմտ. Որ ըստ ամենայն: Ճշ.  
շրկ. դկ. Փառարանութիւն: Հմբ. աձ. Ինձ  
օգնութիւն և Համբարձի:
- 4 Եշ. ԱԿ. Մրցոց հարցն եզիպտացոց՝ 3  
Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Խագրի,  
Յովհաննու Գրենցայն, Յովհաննու Կար-  
ենասակին, Նեղոսի, Արակէի, Սիսիանու,  
Դահիէի, Մրապիննի, Մակարիսոսի, Պի-  
մէնի և այլոց սրբոց հարցն: Օրհ. աձ.  
Որ գերազանցեալ (յոգնակի ասա), իւր  
սարօրն: Մնկ. և Հմբ. բձ. Պարծանք  
եկեղեցւոյ: Ժմտ. Ճգնաւորք Քրիստոսի:  
Ճշ. շրկ. աձ. (Ողորմեա) Որ անմարմ-  
նական վարուք:
- 5 Ուր. ԲԶ. Պահէ: Օրհ. Ապշ. բձ. Դարձն  
զցասումն: Հրց. Ճնկ. դձ. Օրհնեմք զքեզ  
Մնկ. Խաչի բձ. Ապաւինեցաք: Ժմտ. Որ

- ըստ ամենայն: Ճշ. շրկ. դկ. Որ անսկիզ-  
բըն: Հմբ. բձ. Համբարձալով:
- 6 Շր. ԲԿ. Մրցոյն Նիկողայոսի Զմիւ-  
նացոյ Մխանչելազործ հայրապետին: 5  
Օրհ. ակ. Որք զարդարեցին, իւր սարօքն:  
Մնկ. դկ. ստղ. Հիացան ժմտ. Զհայրա-  
պետականն: Ճշ. շրկ. (Ողորմեայն ասա)  
դձ. Որ զջնորհս: Հմբ. աձ. Սուլքը իս  
Տէր և Երկնաքաղաքացին:
- 7 Վ կիր. ԳԶ. Գ. կիր. Յիսեակաց: Օրհ. 6  
գձ. Օգնական ընդունելին: Հրց. Յար. բձ.  
Գ. Որ թագաւորդ ևս ժմտ. Միածին Որ-  
դին: Ճշ. շրկ. գձ. Զթագաւորն Քրիստոս:  
Հմբ. գձ. Գ. Փառաւորեալ է բու:
- Բարեկենդան Ա. Յակովբայ պահոց,  
բայց տօնք լինին:
- 8 Բշ. ԳԿ. Պահէ: Մրցոցն Մինասայ, Եր-  
մողինեայ, Գրարոսի և կամաւոր աղքա-  
տացն Յովհաննու և Ալէսիանոսի: Օրհ.  
Մրտ. դկ. Այսօր Հրեշտակաց դասքն:  
Հրց. Մրտ. դձ. Ա. Յուսացեալքն: Մնկ.  
և Հմբ. բձ. Զիշատակ: Ժմտ. ի տաճարի:  
Ճշ. շրկ. դկ. Ճգնաւորք ճշմարիտ: Նա-  
խատօնակ: Շրկ. ակ. Որ նախիմաց, իւր  
սարօրն: Ա. զԱստ., Կեցո, Քնկալ Տէր:

Յ Առաջին քառորդ լուսնի:

- | 0  | 1 | ԳԵԿՏԵՄՔԵՐ  | 1  | 1 |
|----|---|--|----|---|
| 9  |   | Դվարիմ: Ա. Աստուածածինի յանայի: Հկնի ժողովեալքսին երկ՝ Զայնիւ առ քեզ: Օրհ. դկ. Երգեցէք որդիք Սիովնի, իւր սարօքն: Քրզ. Մայր Սուրբ: Ա. Աստուած՝ որ խաչեցար: Գիրք, Աւարն, էական: Ա. զԱստ., Կեցո, Ընկալ Տէր: Ժմտ. Ազաշեմք զքեզ: Ճշ. շրկ. դկ. Մառ կենաց: զԱնաւոտհան գիրքն և զԱնաւարանն կարդա: Սրբ. Բազմութինք: Յերեկոյին՝ Քրզ. Մայր Սուրբ: Ճմբ. զձ. Նոր Սիովն: Ա. զԱստ., Կեցո, Ընկալ Տէր: | 8  |   |
| 10 |   | Դշ. ԴԿ. Պահիք: Օրհ. Ապշ. դկ. Քրիստոս Աստուած յոյս: Հրց. Ապշ. դկ. Բ. Աղջմի. Օրհնեալ Տէր Աստուած: Մնկ. դկ. է անոն Տեառն: Ժմտ. Որ ըստ ամենայն: Ճշ. շրկ. դկ. Փառարանութին: Ճմբ. դկ. Մայրեն աղօթք իմ:   | 9  |   |
| 11 |   | Եշ. ԱԶ. Պահիք: Մրցցն՝ Խառաւախոսի, Օզնենախոսի, Եփինեխոսի, Ռվեխսէխոսի և Մարդարիոսի: Օրհ. Մրտ. աճ. Ժողովեալքս ի յիշատակ: Հրց. Մրտ. դձ. Բ. Սուրբ ևս Տէր: Մնկ. և Ճմբ. բկ. Որ զնուր սիրոյ քռ: Ժմտ. ի տաճարի: Ճշ. շրկ. աճ. Պարծեսացին:  | 10 |   |
| 12 |   | Ուր. ԱԿ. Պահիք: Օրհ. Ապշ. ակ. Մովլ կենցաղոյս: Հրց. Ճնդ. դկ. Բանդ Աստ-  | 11 |   |
|    |   |  |    |   |
- ուած: Մնկ. Խաչի ակ. Սեղան քռ Տէր: Ժմտ. Որ ըստ ամենայն: Ճշ. շրկ. բկ. ԲՌ յանելից: Յերեկոյին՝ Հմբ. ակ. Օդնական մեր լեր: Խախատօնակ: Երկ. դկ. Յաղթող և սուրբ Հայրապետ, իւր սարօքն: Քրզ. Ա. Ճզնաւորօքն: Աղթ. Որ ընտրեցեր:
- 13 + Եր. ԲԶ. Մրցցն Յակովքայ Մծբնայ Բայրապետին, Մարութի նգնաւրին և Մելիսսափ Եպիսկոպոսին: Օրհ. դկ. Յաղթող և սուրբ Հայրապետ, իւր սարօքն: Մնկ. դձ. Հայրապետ սուրբ և անրիծ: Ժմտ. ԶՀայրապետականն: Ճշ. շրկ. դկ. Որ յանապատէ: Հմբ. աճ. Սուրբ ևս Տէր: և Երկնաքաղաքացին:
- 14 + Կիր. ԲԿ. Գ. կիր. Յիսենակաց: Օրհ. Բկ. Փարաւոն: Հրց. Յար. բկ. Գ. Որ զառապայի: Ժմտ. Միածին Որդի: Ճշ. շրկ. Օրհնութին ի բարձունս: Հմբ. բկ. Կանխեցին կանայքն:
- 15 Բշ. ԳԶ. Մրցց Խայրապետացն՝ Իգնա- 14  
տիսի և Սորելի և Մարութայի Եպիսկո-  
պոսին: Օրհ. Մրտ. դձ. Զարիական մահ: Հրց. Մրտ. դձ. Գ. Որք Հաղորդեցան: Մնկ. և Հմբ. դձ. Որ Հրավիրեցէր զյառա-  
շաղոյն: Ժմտ. ԶՀայրապետականն: Ճշ. շրկ. դձ. Զառաջնորդս և զվարդապետս:

16 Պ. Պ. Արբոցն՝ Թէսպումպայ նախակո- 15  
պոսին, և Թէլվեայ վկային, և շորիզ  
զինուուրացն՝ Բատսի, Նասերի, Խոտիզի և  
Բասիլիդեայ: Օրհ. Մրտ. դկ. Այսօր  
Հրեշտակաց դասին: Հրց. Մրտ. դկ. Ա.  
Առ քեզ Աստուած: Մնկ. դկ. Ընդ գուար-  
թունս: Ժմտ. Ի տաճարի: Ճշ. շրկ. դկ.  
Ճղնաւորք ճշմարիտք: Հմբ. դկ. Այսօր  
մարափիրոսաց դասին:

## ○ Լրումն լուսնի:

17 Պ. Պ. Պահե: Օրհ. Ապշ. դձ. Համ- 16  
բանմամ առ քեզ: Հրց. Ապշ. դկ. Գ:  
Հարցն մերոց օրհնամ: Մնկ. դձ. Ման-  
կունք զՏէր: Ժմտ. Որ ըստ ամենայն:  
Ճշ. շրկ. դկ. Փառարանութիւն: Հմբ. դձ.  
Ջքեղ կարդամք:

18 Եշ. Պ. Արբոց կուսանացն Խնդոսի, 17  
Խոմնայի, և Գդերիկոսի քահանային, և  
երկուց բիւրցն, որք այրեցան յեկեղե-  
ցին Նիկոնիդացաց: Օրհ. դկ. Ի լիշա-  
տակս վկայից: Հրց. Մրտ. դկ. Բ. Որ  
զ՞րաշափառ: Մնկ. և Հմբ. դկ. Այսօր  
ընդ անմամնոցն: Ժմտ. Ի տաճարի: Ճշ.  
շրկ. դկ. Այսօր հկեղեցի Քրիստոսի:

19 Ուր. ԱԶ. Պահե: Օրհ. Ապշ. աձ. Հայր 18  
բազումողորմ: Հրց. Ընդ. դձ. Որ փառօք  
Ճօր: Մնկ. Խալի աձ. Հրաշակերու և զօ-

րեց: Ժմտ. Որ ըստ ամենայն: Ճշ. շրկ.  
դկ. Որ անսկիզբն: Հմբ. աձ. Խնձ օգնու-  
թիւն և Համբարձի:

20 Շր. ԱԿ. Արբոցն Արգարու նախավկայ և 19  
ի Քրիստոս անդրածիկ հաւատացեալ քա-  
զաւորին մերոյ: Օրհ. ակ. Որ զերկնա-  
տր, իւր սարօքն: Մնկ. րկ. Ով երանելիից:  
Ժմտ. Որպէս յիտ Աստուածաւէր: Ճշ.  
ըրկ. բձ. (Ողորմեա) Աստուած փրկիչ  
միբ: (Չիրք և Աւետարանն Թէղոսինն  
է): Հմբ. աձ. Սուրբ և Տէր և Երկնաքա-  
զաքացին:

21 + Կիր. ԲԶ. Ե. կիր. Յիսեակաց: Օրհ. 20  
բձ. Օրհնեսցուք զՏէր որ օրհնեացն: Հրց.  
Յար. գձ. Բ. Փառաւորեալ Որդի: Ժմտ.  
Միածին Որդի: Ճշ. շրկ. բձ. Թագաւորին  
յաւիտենից: Հմբ. բձ. Ի զերեզման, եկին  
ի զերեզման, Զայն աւետաւոր և Այսօր  
զուարձացան:

22 Բշ. ՊԿ. Արբոցն Արբանամու և Խորե- 21  
նայ, և անարծար բծկացն Կողմայի և  
Դամիանոսի և Աստուածաւոյ վկային:  
Օրհ. Մրտ. րկ. Շնորհեա մեզ Քրիստոս:  
Հրց. Մրտ. աձ. Ջքեղ արդար: Մնկ. րկ.  
Ի փառս պարծեսցին: Ժմտ. Ի տաճարի:  
Ճշ. շրկ. բկ. Հրաշափառ ճգնութեամբ:  
Հմբ. բկ. Որ պսակիչն ես: Խախատօնակ:  
Շրկ. դձ. Յաղթող գտաւ, իւր սարօքն:

Քրդ. Սուլրք ճգնաւորօքն: Աղթ. Որ ընտրեցիր:

Զմեռնամուռ և արևադարձ:  
Յերեկն սկսածի երկարի  
և գիշերն կարճանալ:

- 23 Պշ. Գջ. Մերոցն Դափրի մարգարէին և 22  
Յակովլեայ Տեանելլբայր առաքերոյն:  
Օրհ. դժ. Յազլողոց զտաւ, իւր սարօքն:  
Թագ. յափր.՝ Այսօր զտաք: Մհծ. դժ.  
Առաւոտ խալազուինան: Մնկ. և Ճմբ.  
դժ. Օրհնեցէք զՏէր: Զկնի էականին,  
ծանր սաս, երդ՝ Մաքրավէս օրինակի և  
Յուրախուրիմս: Ժմտ. Տէր որ Հիմնեցու-  
ցէք: Ճշ. շրկ. դժ. (Ողորմեա) Անսկիզբն  
Աստուած: Սրբ. Ամենակալ:
- 24 Պշ. Գկ. Պահե: Օրհ. Ապշ. դկ. Քրիստոս 23  
Աստուած աստուծոց: Հրց. Ապշ. դկ. Պ.  
Օրհնեալ Տէր Աստուած: Մնկ. դկ. Օրհնե-  
ցէք զՏէր: Ժմտ. Որ ըստ ամենայն: Ճշ.  
շրկ. դկ. Փառաբանութիւն: Ճմբ. դկ.  
Տուր մեզ Տէր և Հովանի: Նախատօնակ:  
Շրկ. դկ. Նահատակ բարի, իւր սարօքն:  
Մ. ճգնաւորօքն: Աղթ. Պսակիչ սրբոց:  
◆ Վեռջին քառորդ լուսնի:
- 25 † Եշ. Պջ. Մերոցն Ստեփանոսի նախա- 24  
վկային և առաջին մարտիրոսին: Օրհ.  
դկ. Նահատակ բարի, իւր սարօքն: Թագ.  
յափր.՝ Այսօր զտաք: Մնկ. և Ճմբ. դկ.

Նախասարկաւագ: Զկնի ճառագայթեալին  
երդ՝ Փայլին արդարէն և Քո անպատճեմ:  
Ժմտ. Յնծայ այսօր և Յորովայնէ ընտրր-  
եալ: Ճշ. շրկ. դկ. Յնծայ այսօր:

- 26 Ուր. Պկ. Պահե: Օրհ. Ապշ. դկ. Քրիս-  
տոս Աստուած յոյս: Հրց. Հնգ. դկ. Յափր-  
տինից: Մնկ. Խաչի դկ. Խաչի քո Քրիս-  
տոս: Ժմտ. Որ ըստ ամենայն: Ճշ. շրկ.  
դկ. Որ անսկիզբն: Ճմբ. դկ. Մացեն  
ազօթք իմ: Նախատօնակ: Շրկ. դժ. Յըն-  
ծայ այսօր եկեղեցի Աստուծոյ, իւր սա-  
րօքն: Մ. ճգնաւորօքն, Որ ընտրեցիր:
- 27 Շր. Աջ. Մերոց առաքելցն Պետրոսի 26  
և Պօղոսի: Օրհ. դժ. Յնծայ այսօր եկե-  
ղեցի, իւր սարօքն: Թագ. յափր.՝ Այսօր  
զտաք: Մնկ. ստղ. դկ. Որ արփիհարազ:  
Զկնի Տէրն յատ ստեղծմանին երդ՝ Մաք-  
րավէս օրինակի և Յուրախուրիմս: Ժմտ.  
Առաքեալք: Ճշ. շրկ. դժ. Ամոլք հաւա-  
տոյ: Ճմբ. դկ. ստղ. Որ անպարազիբն:
- 28 † Կիր. ԱԿ. Ջ. Կիր. Յիսեակաց: Օրհ. 27  
ակ. Երգեցէք Տեառն: Հրց. Յար. դկ. Բ.  
Նախայաւիտեան: Ժմտ. Միածին Որդի:  
Ճշ. շրկ. ակ. Թագաւորեաց Աստուած:  
Ճմբ. ակ. Հրաշալի զյարութիւն: Նախա-  
տօնակ: Շրկ. դկ. Որ էն յէռիթեան, իւր  
սարօքն: Մ. ճգնաւորօքն, Որ ընտրեցիր:

- 29 Թշ. թզ. Սրբոց Որդացն Որոտման՝ 28  
Յակովիքայ առաքելոյն և Յովհաննու ամ-  
տարանշին։ Օրհ. դկ. Որ էն յէութեան,  
իւր սարօքն։ Թագ. յափա։ Այսօր դասք։  
Մնկ. և Հմբ. դկ. ստղ. Որ յանստուեր։  
Զկնի Մանկանցն՝ Սաղմոս ձայնիւ Գիրք։  
Զկնի Արարշականին երգ։ Սաքրապէն  
օրինակի և Յուրախորիթին։ Մթ. Քրիս-  
տոս Աստուած։ Քրգ. Ս. ճգնաւորօքն։  
Աղթ. Որ ըստրեցեր։ Ժմտ. Այսօր ահա-  
ւոր։ Ճշ. շրկ. (Ողորմիա) դկ. Որդիքն  
որոտման։
- Բարեկենդան Ս. Ծննդեան պահոց։ Օրհ. 29  
30 Գշ. թզ. Ա. օր Ծննդեան պահոց։ Օրհ. 29  
բկ. Յամենայն ժամ։ Հրց. Ապշ. դկ. Ե.  
Օրհնեալ ևս Տէր։ Մնկ. բկ. Արթոնք և  
պատրաստ։ Ժմտ. Որ ի Հօրէ։ Ճշ. շրկ.  
գձ. Քրիստոս Աստուած յիշեա։ Հմբ. բկ.  
Յօնութին մեզ ժամանեա։
- 31 Գշ. թզ. Բ. օր Ծննդեան պահոց։ Օրհ. 30  
գձ. Զերծո զիս։ Հրց. Ապշ. դկ. Զ. Աղցմի.  
Աստուած հարցն։ Մնկ. գձ. Զքեզ բարե-  
բանն։ Ժմտ. Որ ըստ ամենայն։ Ճշ.  
շրկ. դկ. Փառաբանութին։ Հմբ. գձ.  
Զօրհներգութինս և Պահապան։

● Ծնունդ լուսնի։

## ՕՐԱՑՈՅՑ

### 1986

#### ԱԱՍԱՐԱԿ ԹՈՒԱԿԱՆԻՒ ՔՐԻՍՏՈՆԻ (ԸԱՏ ՀԻՆ ՏՈՄԱՐԻ)

Գիր տարւոյ (Տարեգիր)	.	.	.	8
Եօթներեակ (Կիրակագիր)	.	.	.	Բ
Վերադիր	.	.	.	30
Խնճնատներեակ (Ուկեգիր)	.	.	.	9
Տանուտէր	.	.	.	Յուղն

Մահօթութիւն։ Հին տոմարով դեկավարուող համապերների տոմարական նաշիները դիրացնելու նպատակով, տրուած է հին տոմարով կազմուած օրացոյցը իերև յաւելուած։ Օրացոյցի ձախ կողմի յուսանցքի վերևուած նշանակուած Հ-ն պէտք է կարդալ Հին տոմար, իսկ Ն-Ծ Նոր տոմարի ամսանաշիւ, պահնըքն՝ եթէ հին տոմարով ամսի 1-Ծ է, նոր տոմարի ամսահաջորով կիմնի 13 օր ոչ 14, կամ 7' 20, կամ 12' 25 և այլն։

Այս ամսահաշիրը նոր տոմարով դեկավարութաղների համար ո՞չ մի նշանակութիւն չունի, քանի որ նոր տոմարի համար գործ է ածուում այլ տարեգիր:

Այս երկրորդ մասում նշանակուած են Հին տոմարով կազմուած ամիսը և ամսաթիրը, օրերի անունները, օրուայ ձայնը, մէջ ընդ մէջ օրուայ հարցերը, կիրակինների համբարձինները (Եկեղեցականների համար):

Եկեղեցականները տօնի լրի պատկերը տևանելոյ համար պիտի դեկավարուն Տօնացոյցով և վերշինի ծանօթութիւնները ի Ակատի ունենան, յատկապէս Հանգստեան և Ապաշխարութեան շարականների նկատմարք, կիրակինների Համբարձինները, օրուայ ձայնը որոշնիս և մի քանի այլ դեպքերում:

### ՅՈՒՆՈՒԱՐ

(31 ՕՐ)

1/14 † Գլ. ԲԿ. Գ. օր Մենդեան պահոց:

Կաղանդ և տարեմուտ:

Զկնի սրբոյ պատարագի կատարի  
Մարդանք Հայրապետական:

2/15 Գլ. ԳԶ. Գ. օր Մենդեան պահոց:

3/16 Եշ. ԳԿ. Ե. օր Մենդեան պահոց:

4/17 Ուր. ԳԶ. Ջ. օր Մենդեան պահոց:

5/18 † Շբ. ԴԿ. Ճ՛րազարոյց Մենդեան և  
Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի  
Քրիստոսի:

Ն ա ւ ա կա տ ի ք:

6/19 † Կիր. ՍԶ. Տօն Մենդեան և Աստուա-  
ծայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի  
Քրիստոսի:

Յաւարտ սրբոյ պատարագի  
կատարի հանդէս Զօրինեաց:  
Միջոց ուսիթքն երեսուն և վեց օր է:


- 7/20 Դ. Բ. ԱԿ. Բ. ՕՐ ՄԵՆՔԵԱՆ:  
Յիշատակ մեռելոց:
- 8/21 Գ. ԲԶ. Գ. ՕՐ ՄԵՆՔԵԱՆ:  
9/22 Դ. ԱԿ. Դ. ՕՐ ՄԵՆՔԵԱՆ:  
10/23 Ե. ԳԶ. Ե. ՕՐ ՄԵՆՔԵԱՆ:  
11/24 ՈՒ. ԳԿ. Գ. ՕՐ ՄԵՆՔԵԱՆ:  
12/25 Շ. ԴԶ. Է. ՕՐ ՄԵՆՔԵԱՆ:  
13/26 Դ. ԿԻՐ. ԳԿ. Ը. ՕՐ ՄԵՆՔԵԱՆ: Տօն ան-  
ուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուս  
Քրիստոսի:  
14/27 Դ. Ա. Ս. Տօն ՄԵՆՔԵԱՆ Մը-  
հանոն Կարապետին:  
15/28 Գ. ԱԿ. Մըրոցն՝ Պետրոսի հայրապ-  
տին, Վասայ և փակուպոսին և Աբիսոլո-  
մայ սարկապահին:  
16/29 Գ. ԲԶ. Պահէ: Հրց. Ապշ. բձ. Բ.  
Աղջմի: Որ ապրեցուցեր:  
17/30 Ե. ԱԿ. Մըրոցն Անտօնի ճգնատրին:  
18/31 ՈՒ. ԳԶ. Պահէ:
- Փետրուար**
- 19/1 Շ. ԳԿ. Մըրոցն՝ Թէոդոսի քագատրին  
և մանկանցն Եփսոսի:
- 20/2 Դ. ԿԻՐ. ԴԶ. Ա. ԿԻՐ. Պկնի ՄԵՆՔԵԱՆ:  
Հմբ. բձ. Զյարութին Աստուածորդուոյն:  
21/3 Բ. ԳԿ. Մըրոցն՝ Կիրակոսի և մօրն Յու-  
ղիտայի և սրբոց վկայիցն՝ Գորդիոսի,  
Պողիմոսի և Գրիգորիսի: Հրց. Մըր. ակ.  
Ա. Սուրբ Աստուած արարից

- 22/4 Գ. ԱԶ. Մըրոցն՝ Վահանայ Գողքնաց-  
այն, Եփմեայ կոսին, և մօրն նորա  
Փիլապոսի, և մօրն Կոզեայ, և երկուց  
եղբարցն Սերգեայ և Սալտոնի և երկուց  
ներքինեացն: Հրց. Մըր. ակ. Բ. Որ  
բարձրեալդ ես:
- 23/5 Դ. ԱԿ. Պահէ:
- 24/6 Ե. ԲԶ. Մըրոց ճգնատրացն՝ Տրիփոնի  
Պարսամայ և Ոնովրիսոփ:
- 25/7 ՈՒ. ԲԿ. Պահէ:
- 26/8 Շ. ԳԶ. Մըրոց հայրապետացն՝ Աքա-  
նասի և Կիրոյի:
- 27/9 Դ. ԿԻՐ. ԳԿ. Բ. ԿԻՐ. Պկնի ՄԵՆՔԵԱՆ:  
Հրց. Յար. բձ. Ե. Արարիչդ արարածոց:  
Հմբ. գկ. Տեսիլ փայլակնաձև:
- 28/10 Բ. ԳԶ. Մըրոցն՝ Ետինէսոսի, Մակա-  
րիսոփ, Կաղերիսոփ, Կանդիտոսի և Ակի-  
դասայ: Հրց. Մըր. բձ. Ա. Անոխակալ:
- 29/11 Գ. ԳԿ. Մըրոցն՝ Անդրէի օրավարին, և  
բանակի նորին, և սրբոց վկայիցն Կա-  
լինիկոսի և Դոմետեայ:
- 30/12 Դ. ԱԶ. Պահէ:
- 31/13 Ե. ԱԿ. Մըրոցն՝ Անդրիանոսի և կնոջ  
նորա Անատօլայ, Թէոդորոսի և Ելքի-  
րոսի վկայիցն: Հրց. Մըր. բձ. Բ. Բնդ  
սուրբս քու:

## ՓԵՏՐՈՒԱՐ

(28 ՕՐ)

- 1/14 Ուր. թջ. Պահճ:
- 2/15 Ծր. թկ. Մրբոյն Գրիգորի աստղածառանին:
- 3/16 † Կիր. Գջ. Գ. Կիր. զկնի Մննդեան: Հրց. Յար. գկ. Գ. Այսօր զենաւ: Հմբ. գձ. Փառաւորհայ է քո:
- 4/17 Բշ. Գկ. Մրբոց Մակարայեցայն՝ Ելիա-  
զարու քահանային և Շամումեայ և  
եօրն որդոց նորին: Հրց. բկ. Օրհնեմք  
զրեղ Տէր:
- 5/18 Գշ. Գջ. Մրբոց Երկուտասան մարգա-  
րեցն՝ Ովսեայ, Սմովսայ, Միքիայ, Յո-  
վելեայ, Արդիու, Նաւուայ, Ամրակու-  
մայ, Յօնանու, Սոփոնեայ, Անգեայ,  
Զաքարեայ և Մաղամեայ:
- 6/19 Գշ. Գկ. Պահճ:
- 7/20 Եշ. Աջ. Մրբոցն Սովիայ և Երից  
դասերացն՝ Պիստոսի, Էպիփոսի և Ազա-  
պեայ: Հրց. բկ. Որը ի մարտի:
- 8/21 Ուր. Ակ. Պահճ:



- 9/22 Շր. ԲԶ. Մրգոց որդոց և քռանց Արքոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Արքիստակիսի, Վրանիսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի:
- 10/23 † Կիր. ԲԿ. Դ. կիր. զինի Մննդեան: Հմբ. բկ. Զյարութիւն Քրիստոսի:
- Բարեկենդան Առաջաւորաց պահոց:
- 11/24 ԲՀ. ԳԶ. Ա. օր Առաջաւորաց պահոց: Հրց. Աղցմի. բկ. Մանկանցն զձայն:
- 12/25 ԳՀ. ԳԿ. Բ. օր Առաջաւորաց պահոց:
- 13/26 ԳՀ. ԳԶ. Գ. օր Առաջաւորաց պահոց: Նախատօնակ:
- 14/27 † ԵՀ. ԳԿ. Դ. օր Առաջաւորաց պահոց: Տեանընդառաջ:
- 15/28 Ուր. ԱԶ. Ե. օր Առաջաւորաց պահոց: Յիշատակ Յովեանու մարգարէին:
- Մարտ**
- 16/1 † Շր. ԱԿ. Մրգոցն՝ Սարգսի զօրավարին և որդոյ նորա Մարտիրոսին և շորեփտասան զինուրացն:
- 17/2 † Կիր. ԲԶ. Ե. կիր. զինի Մննդեան:
- 18/3 ԲՀ. ԲԿ. Մրգոց Ստովմեանց զօրավարացն:
- 19/4 ԳՀ. ԳԶ. Մրգոց Սումբասեանց վկայիցն:
- 20/5 ԳՀ. ԳԿ. Պահի:



Ազեր և Մասի Մանուկյանց գոհնառություն

- 21/6 Եշ. ԴԶ. Մրբոց Ռսկեանց քահանայիցն: 22/7 Ուր. ԴԿ. Պահեֆ: 23/8 Շր. ԱԶ. Մրբոյն Խահանակայ Պարբեկ հայրապետին մերոյ: 24/9 † Կիր. ԱԿ. Զ. կիր. զիճի Ծենդեան: 25/10 Բշ. ԲԶ. Մրբոցն՝ Մարկոսի և վիխովոպսին, Պիսինի քահանային, Կիրտղի և Բենիամինի սարկաւազացն և Մրբոց վկայիցն՝ Սբդմսենի, Ուրմզպանայ և Սայենի: 26/11 Գշ. ԲԿ. Մրբոց Ղեռդեանց քահանայիցն: 27/12 Գշ. ԳԶ. Պահեֆ: 28/13 † Եշ. ԳԿ. Մրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ 1036 վկայիցն, որք կատարեցան ի Մեծի պատերազմին:

Տօն անուանակոչութեան  
Նորին Վեհափառութեան

### S. S. Վ Ա Զ Գ Ե Ն Ի Ա Ռ Ա Զ Ն Ո Յ

Մրբազմագոյն Կաթողիկոսի  
Ամենայն Հայոց:  
Զկնի սրբոյ պատարագի կատարի  
Մաղթանք Հայրապետական  
յամենայն եկեղեցին Հայաստանեաց:  
Ի մէջ սրբոյ պատարագի կատարի  
Հոգեհանգիստ վասն համօրէն  
ննջեցելոց ազգին հայոց:  
Ցիշատակ մնուելոց և տօն ազգալին:

### ՄԱՐՏ

(81 ՕՐ)

- 1/14 Ուր. ԴԶ. Պահեֆ: 2/15 Շր. ԴԿ. Կոստանդնուպոլսոյ Ա. Ժողովոյն 150 Հայրապետացն (381 թ.): 3/16 † Կիր. ԴԿ. Բուն Բարեկենդան: 4/17 Բշ. ԱԶ. Ա. օր Մեծի Պահոց: 5/18 Գշ. ԱԿ. Բ. օր Մեծի Պահոց: 6/19 Գշ. ԲԶ. Գ. օր Մեծի Պահոց: 7/20 Եշ. ԲԿ. Դ. օր Մեծի Պահոց: 8/21 Ուր. ԳԶ. Ե. օր Մեծի Պահոց: 9/22 Շր. ԳԿ. Զ. օր Մեծի Պահոց: Մրբոյն Թէոդորոսի բազատրին: 10/23 † Կիր. ԴԶ. Բ. կիր Քառասնորդական պահոց: (Արտաքսում և ման): 11/24 Բշ. ԴԿ. Ը. օր Մեծի Պահոց: 12/25 Գշ. ԱԶ. Թ. օր Մեծի Պահոց: 13/26 Գշ. ԱԿ. Ժ. օր Մեծի Պահոց: 14/27 Եշ. ԲԶ. ԺԱ. օր Մեծի Պահոց: 15/28 Ուր. ԲԿ. ԺԲ. օր Մեծի Պահոց:

- 16/29 Շր. ԳԶ. ԺԳ. օր Մեծի Պահոց: Մըրոցն՝  
Կիւրդի Երուսաղէմայ Հայրապետին և  
միւս Կիւրդի Եպիսկոպոսին և մօրն նո-  
րա Աննայի:
- 17/30 † Կիր. ԳԿ. Գ. Կիր. Քառասնորդական  
պահոց: (Ա ճ ա ռ ա կ ի ն):
- 18/31 ԲՀ. ԳԶ. ԺԵ. օր Մեծի Պահոց:  
**Ապրիլ**
- 19/1 ԳՀ. ԳԿ. ԺԳ. օր Մեծի Պահոց:
- 20/2 ԳՀ. ԱԶ. ԺԷ. օր Մեծի Պահոց:
- 21/3 ԵՀ. ԱԿ. ԺԸ. օր Մեծի Պահոց:
- 22/4 Ուր. ԲԶ. ԺԹ. օր Մեծի Պահոց:
- 23/5 Շր. ԲԿ. Ի. օր Մեծի Պահոց: Մըրացն  
Յովհաննու Երուսաղէմայ Հայրապետին և  
Հայրապետին մերոյ՝ Յովհաննու՝ Օձնեց-  
տյն և վարդապետացն մերոց՝ Յովհան-  
նու Որոտնեցայն և Գրիգորի Տարեաց-  
տյն:
- 24/6 † Կիր. ԳԶ. Դ. Կիր. Քառասնորդական  
պահոց: (Տ ճ ա ռ ե ս ի ն):
- 25/7 ԲՀ. ԳԿ. ԽԹ. օր Մեծի Պահոց:

- 26/8 ԳՀ. ԳԶ. ԽԻ. օր Մեծի Պահոց:
- 27/9 ԳՀ. ԳԿ. ԽԻ. օր Մեծի Պահոց:
- 28/10 ԵՀ. ԱԶ. ԽԵ. օր Մեծի Պահոց:
- 29/11 Ուր. ԱԿ. ԽԶ. օր Մեծի Պահոց:
- 30/12 Շր. ԲԶ. ԽԷ. օր Մեծի Պահոց: Մըրոց  
մանկանցն յառասնից, որք ի Սեբա-  
տիա կատարեցան:
- 31/13 † Կիր. ԲԿ. Ե. Կիր. Քառասնորդական  
պահոց: (Պ ա տ ա ւ ո ր ի ն):

**Ա Պ Ր Ի Լ**  
(Յ Ո Ր Ո Ր)

- 1/14 Բ. Դ. Խ. Օ. ՕՐ ՄԵԾԻ Պահոց:  
2/15 Դ. Գ. Կ. Լ. ՕՐ ՄԵԾԻ Պահոց:  
3/16 Դ. Դ. Լ. Ս. ՕՐ ՄԵԾԻ Պահոց:  
4/17 Ե. Դ. Լ. Բ. ՕՐ ՄԵԾԻ Պահոց:  
5/18 Ուր. Ա. Ջ. Լ. ՕՐ ՄԵԾԻ Պահոց: Նախատոնակի:  
6/19 + Շր. Ա. Կ. Լ. ՕՐ ՄԵԾԻ Պահոց: Սըրբոյն Գրիգորի Լուսաւրչին մերոյ սոսկալի շարշարանացն և մտին ի Վիրապն: Նախատոնակի:  
7/20 + Կիր. Բ. Զ. Զ. Կիր. Քառասնորդական պահոց: (Գալստեան): Անտումեն Սուրբ Աստուածածնի:  
8/21 Բ. Բ. Ա. Լ. Օ. ՕՐ ՄԵԾԻ Պահոց:  
9/22 Դ. Դ. Լ. Օ. ՕՐ ՄԵԾԻ Պահոց:  
10/23 Դ. Գ. Կ. Լ. Օ. ՕՐ ՄԵԾԻ Պահոց:

11/24 Եղ. Դ. Լ. Օ. ՕՐ ՄԵԾԻ Պահոց:

Ցիշատակ բիւրաւոր Աամատակացն մերոց, որք կատարեցան լընթացն Համաշխարհային առաջին պատերազմի, յԱրևմտեան Հայաստան: Կատարի հոգեհանգիստ յեկեղեցին Հայաստանեաց:

12/25 Ուր. Դ. Կ. Խ. Օ. ՕՐ ՄԵԾԻ Պահոց:

13/26 Շր. Ա. Զ. Խ. Ս. Օ. ՕՐ ՄԵԾԻ Պահոց: Ցիշատակ Յարութեան Ղազարու:

14/27 + Կիր. Ա. Կ. Մաղկազարդ: Յերեկոյին՝ Դումբացէք:

15/28 Աւագ Երկուշարքի: Բ. Պահի:

16/29 Աւագ Երեքշարքի: Բ. Պահի: Ցիշատակ տասն կուսանացն:

17/30 Աւագ Չորեքշարքի: Գ. Պահի:

**Մայիս**

18/1 + Աւագ Հինգշարքի: Կ. Պահի: Ցիշատակ լեռբեաց Տեառն մերոյ Ցիսուափ Քրիստոսի: Յերեկոյին՝ Ոտնալուայ:

19/2 Աւագ Ուրբար: Դ. Պահի: Ցիշատակ շարշարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Ցիսուափ Քրիստոսի:

- 20/3 ՞ Աւագ Շաբար: ԴԿ. Պանք: Ճրագալոյց Զատկի:
- 21/4 ՞ Կիր. Ա.Զ. ԶԱՏԻԿ: Յարութիւն Տեսող մերոյ Ֆիոնտովի:
- Ուսիիք է մեզ մինչ ցշամբարձումն:
- 22/5 ՞ ԲՀ. ԱԿ. Թ. օր Զատկի:
- Յիշատակ մեռելոց:
- 23/6 ՞ ԴՀ. ԲԶ. Գ. օր Զատկի:
- 24/7 ԴՀ. ԲԿ. Դ. օր Զատկի:
- 25/8 ԵՀ. ԴԶ. Ե. օր Զատկի:
- 26/9 Ուր. ԳԿ. Ջ. օր Զատկի:
- 27/10 Շր. ԳԶ. Է. օր Զատկի: Յիշատակ զբախաման Մըրոյն Ցովիաննու Կարապետին:
- 28/11 ՞ Կիր. ԳԿ. Ը. օր Զատկի: Կրկնազատիկ (նոր կիւրակէ):
- Յիշատակ բիւրաւոր Աահատակացն մերոց Համաշխարհապին առաջին և երկրորդ պատերազմաց:
- Կատարի նոգեհանգիստ լամենալըն եկեղեցին Հայաստանեաց:
- 29/12 ԲՀ. Ա.Զ. Թ. օր Ցինանց:
- 30/13 ԴՀ. ԱԿ. Ժ. օր Ցինանց:

## ՄԱՅԻՍ

(Տ1 ՕԲ)

- 1/14 ԴՀ. ԲԶ. ԺԱ. օր Ցինանց:
- 2/15 ԵՀ. ԲԿ. ԺԲ. օր Ցինանց:
- 3/16 Ուր. ԳԶ. ԺԳ. օր Ցինանց:
- 4/17 Շր. ԳԿ. ԺԴ. օր Ցինանց:
- 5/18 ՞ Կիր. ԴԶ. Գ. կիր. Զատկի: ԱՀյամամատրան (Կանաչ կիւրակէ):
- 6/19 ԲՀ. ԳԿ. ԺԶ. օր Ցինանց:
- 7/20 ԴՀ. Ա.Զ. ԺԷ. օր Ցինանց:
- 8/21 ԴՀ. ԱԿ. ԺԲ. օր Ցինանց:
- 9/22 ԵՀ. ԲԶ. ԺԹ. օր Ցինանց:
- Յիշատակ աշխարհազօրաց և գորավարացն հայոց, որք կատարեցան ի ներոսամարտին Սարդարապատի 1918 ամի, վասն հաւատոյ և հազրենեաց: Կատարի նոգեհանգիստ յեկեղեցին Հայաստանեաց:
- 10/23 Ուր. ԲԿ. Ի. օր Ցինանց:
- 11/24 Շր. ԳԶ. ԻԱ. օր Ցինանց:
- 12/25 ՞ Կիր. ԳԿ. Դ. կիր. Զատկի: (Կարմիր կիւրակէ):

- 13/26 ԲՀ. ԳԶ. ԽԴ. օր Յինանց:  
 14/27 ԳՀ. ԳԿ. ԽԴ. օր Յինանց:  
 15/28 ԴՀ. ԱԶ. ԽԵ. օր Յինանց:  
 16/29 ԵՀ. ԱԿ. ԽԶ. օր Յինանց:  
 17/30 Ուր. ԲԶ. ԽԷ. օր Յինանց:  
 18/31 Շբ. ԲԱ. ԽԲ. օր Յինանց:

**Յունիս**  
 19/1 † Կիր. ԳԶ. Ե. կիր. Զատկի: Տօն Երևան  
 Սրբոյ Խաչին:  
 20/2 ԲՀ. ԳԿ. Լ. օր Յինանց:  
 21/3 ԳՀ. ԳԶ. ԱՍ. օր Յինանց:  
 22/4 ԴՀ. ԳԿ. ԼԹ. օր Յինանց:  
 23/5 ԵՀ. ԱԶ. ԼԳ. օր Յինանց:  
 24/6 Ուր. ԱԿ. ԼԻ. օր Յինանց:  
 25/7 Շբ. ԲԶ. ԼԵ. օր Յինանց:  
 26/8 † Կիր. ԲԿ. Զ. կիր. Զատկի:  
 27/9 ԲՀ. ԳԶ. ԼԷ. օր Յինանց:  
 28/10 ԴՀ. ԳԿ. ԼԲ. օր Յինանց:  
 29/11 ԳՀ. ԳԶ. ԼԹ. օր Յինանց:  
 30/12 † ԵՀ. ԳԿ. Համբարձումն Քրիստոսի:  
 Յիշատակ փոխադրութեան  
 Հայրապետական Այօռողին Հայոց  
 ի Սոսյ ի Ս. Էջմիածին,  
 յամի Տեառն 1441:

Տօն ազգային: Հանդէս և մաղթանք  
 լեկեղեցին Հայաստանեալց:  
 31/13 Ուր. ԱԶ. ԽԱ. օր Յինանց: Ակիմըն Պահոց:

**ՅՈՒՆԻՍ**

(ՅՈՒՆԻՍ)

- 1/14 Շբ. ԱԿ. ԽԲ. օր Յինանց:  
 2/15 † Կիր. ԲԶ. Է. կիր. Զատկի: Երկրորդ  
 Մաղկազարդ:  
 3/16 ԲՀ. ԲԿ. ԽԴ. օր Յինանց:  
 4/17 ԳՀ. ԳԶ. ԽԵ. օր Յինանց:  
 5/18 ԴՀ. ԳԿ. ԽԶ. օր Յինանց: Պահի:  
 6/19 ԵՀ. ԳԶ. ԽԷ. օր Յինանց:  
 7/20 Ուր. ԳԿ. ԽԲ. օր Յինանց: Պահի:  
 8/21 Շբ. ԱԶ. ԽԹ. օր Յինանց: Լրումն է  
 Կարգի տնօրինականացն, յարութեան և  
 աւետարանացն:  
 9/22 † Կիր. ԱԿ. Հոգեզարուստ: (Պենտէկոս-  
 տէ, յիսներորդ օր ի Զատկին):  
 Բարեկենդաս Եղիական պահոց:  
 10/23 ԲՀ. ԲԶ. Ա. օր Հոգ. պահի:  
 11/24 ԳՀ. ԲԿ. Բ. օր Հոգ. պահի:  
 12/25 ԴՀ. ԳԶ. Գ. օր Հոգ. պահի:  
 13/26 ԵՀ. ԳԿ. Գ. օր Հոգ. պահի:

- 14/27 Ուր. ԳԶ. Ե. օր Հոգ. պահիք:  
 15/28 Շր. ԳԿ. Ջ. օր Հոգ. պահիք:  
 16/29 † Կիր. ԱԶ. Ա. կիր. զինի Հոգ.: Մկրտչ-  
      ըրն Յարութեան կիւրակէից: Յիշատակ  
      Եղիայի մարգարէին:  
 17/30 ԲՀ. ԱԿ. Մրցոց կուսանացն Հռիփսիմ-  
      եանց:

**Յովիս**

- 18/1 ԳՀ. ԲԶ. Մրցոց կուսանացն Գայիան-  
      եանց:  
 19/2 ԴՀ. ԲԿ. Պահիք:  
 20/3 ԵՀ. ԳԶ. Տօն Մրցոյն Յովիսաննու Կարա-  
      պետին և Արանազինեայ Եպիսկոպոսին:  
 21/4 Ուր. ԳԿ. Պահիք: Նախատօնակ:  
 22/5 † Շր. ԳԶ. Մրցոյն Գրիգորի Լուսաւշին  
      մերոյ Ելն ի Վիրապին:  
 23/6 † Կիր. ԳԿ. Բ. կիր. զինի Հոգ.: Տօն  
      Կարուտիկէ Մրցոյ Էջմիածնի:  
      Զինի սրբոյ պատարագի կատարի  
      Մաղթանք Ա. Էջմիածնի:  
 24/7 ԲՀ. ԱԶ. Մրցոց մանկանցն Բերդենէմի  
      և Ակակիոսի Վկային, Մովկիմայ Քահա-  
      նային և Կոտրատիոսի զինաւորին:

- 25/8 ԳՀ. ԱԿ. Մրցոց կուսանացն Խունեայ և  
      Մանեայ:  
 26/9 ԳՀ. ԲԶ. Պահիք:  
 27/10 ԵՀ. ԲԱ. Մրցոց Խջխանացն Սահակայ և  
      Յովիսիայ և Մրցոց Վկայիցն Սարգսի և  
      Բագոսի:  
 28/11 Ուր. ԳԶ. Պահիք:  
 29/12 Շր. ԳԿ. Մրցոցն՝ Ներսիսի Մեծի Հայ-  
      րապետին մերոյ և Խաղայ Եպիսկոպոսին:  
 30/13 † Կիր. ԳԶ. Գ. կիր. զինի Հոգ.: Հրց.  
      ակ. Որ եկիր ի Փրկութիւն: Հմբ. ղձ.  
      Փառաբանակէից:

Բարեկենդան Ա. Լուսաւորչի պահոց,  
      բայց տօնք լինին:

## ՅՈՒԼԻՍ

(81 ՕՐ)

- 1/14 ԲՀ. ԴԿ. Պահիք: Մրցոցն՝ Եպիփանու Կիպրացայն, Թարելայ ճայրապետին և Երից աշակերտաց նորին:
- 2/15 ԳՀ. ԱԶ. Պահիք: Մրցոցն՝ Կոստանդիանոսի բազալտորին և մօրի նորա Հեղինեայ:
- 3/16 ԵՀ. ԱԿ. Պահիք:
- 4/17 ԵՀ. ԲԶ. Պահիք: Մրցոցն՝ Թէոդիտոնի Գաղառացայն, Թայլիեայ թծչին և հօրն Կուսանացն, որի յԱնկիւրիա կատարեցան:
- 5/18 Ուր. ԲԿ. Պահիք: Նախատօնակ:
- 6/19 Շը. ԳԶ. Գիտ ճշխարաց սրբոյն Գրիգորի Լուսատրշին:
- 7/20 Կիր. ՎԿ. Գ. Կիր. զինի Հոգ.: Հրց. Բր. ի յերկնից իշեր:
- 8/21 ԲՀ. ԴԶ. Մրց վկայիցն՝ Անտոնինոսի, Թէոփիլոսի, Անիքտոսի և Փոտինոսի:
- 9/22 ԳՀ. ԴԿ. Մրցոցն՝ Դանիէլի մարգարէին և Երից մանկացն՝ Սեղրակայ, Միսաֆայ և Աբեղնագովի:

- 10/23 ԳՀ. ԱԶ. Պահիք: Նախատօնակ:
- 11/24 Դ. ԵՀ. ԱԿ. Մրցոց բարգմանչացն մերց՝ Սահմակայ և Մեսրովրայ:
- 12/25 Ուր. ԲԶ. Պահիք:
- 13/26 Շը. ԲԿ. Մրցոցն Տրդատայ բազալտորին մերց և Աշլաւէի տիկնոջն և Խուրովիդլիստոյն:
- 14/27 Դ. Կիր. ԳԶ. Ե. Կիր. զինի Հոգ.: Գիւռ Տփոյ Մրցումայ Աստուածածին:
- 15/28 ԲՀ. ԳԿ. Մրցոցն Կալիսարատոսի և բառասն և ինն վկայիցն և Ղունկիանոսի բահանային:
- 16/29 ԳՀ. ԴԶ. Մրցոյն Զաքարիայի մարգարէին:
- 17/30 ԳՀ. ԴԿ. Պահիք:
- 18/31 ԵՀ. ԱԶ. Մրցոյն Եղիսէի մարգարէին:  
Օգոստոս
- 19/1 Ուր. ԱԿ. Պահիք:
- 20/2 Շը. ԲԶ. Մրցոց Երկուտասան առաքելոցն Քրիստոսի և Պօղոսի Երեքտասաներորդ առաքելոյն:
- 21/3 Դ. Կիր. ԲԿ. Գ. Կիր. զինի Հոգ.: Հրց. Բր. ի յերկնային:
- Բարեկենդան Վարդավառի պահոց:
- 22/4 ԲՀ. ԳԶ. Ա. օր Վարդ. պահոց:

- 23/5 Գլ. ԳԿ. Բ. օր Վարդ. պահոց:
- 24/6 Գլ. ԳԶ. Գ. օր Վարդ. պահոց:
- 25/7 Եշ. ԳԿ. Գ. օր Վարդ. պահոց:
- 26/8 Ուր. ԱԶ. Ե. օր Վարդ. պահոց:
- 27/9 Շք. ԱԿ. Ցիշատակ տապանակին հնոյ և  
տօն նորոյ Մրգոյ եկեղեցոյ: Նաւա-  
կատիք:
- 28/10 † Կիր. ԲԶ. Վարդավառ: Պայծառակեր-  
պուրին Տեառն մերոյ Ցիսուսի Քրիս-  
տոսի:
- Միջոց ուսիբն երկու շաբաթ է:
- 29/11 † Բլ. ԲԿ. Բ. օր Վարդավառի:
- Ցիշատակ մեռելոց:
- 30/12 Գլ. ԳԶ. Գ. օր Վարդավառի:
- 31/13 Գլ. ԳԿ. Պահի:
- 

## Օ Գ Ո Ս Ո Ս

(31 ՕՐ)

- 1/14 Եշ. ԳԶ. Մրգոյն եսայեայ մարզարէին:
- 2/15 Ուր. ԳԿ. Պահի: Նախատօնակ:
- 3/16 † Շք. ԱԶ. Մրգոցն Թաղէսոսի Առաքե-  
լոյն մերոյ և Սանդիլսոյ կոտին:
- 4/17 † Կիր. ԱԿ. Բ. Կիր. զկնի Վարդ.: Հրց.  
գձ. Ա. Փառաւորհմբ զքեզ:
- 5/18 Բլ. ԲԶ. Մրգոցն՝ Կիպրիանոսի եսիս-  
կոպոսին և բառասոն և հինգ վկայիցն  
և սրբոց կուսանացն՝ Յուստիանեայ, Եւ-  
փիմեայ և Քրիստինեայ:
- 6/19 Գլ. ԲԿ. Մրգոցն՝ Արանագինեայ եպիս-  
կոպոսին և տասն աշակերտացն և հինգ  
վկայիցն:
- 7/20 Գլ. ԳԶ. Պահի:
- 8/21 Եշ. ԳԿ. Մրգոց նախահարցն՝ Ադամայ,  
Սքէլի, Սերայ, Ենովսայ, Ենովլայ, Եռ-  
լի, Մելիսնեղեկի, Արքահամու, Խաճա-  
կայ, Յակովբայ, Յովսեփայ, Մովսիսի,  
Անհրօնի, Եղիազարու, Յեսուայ, Սամու-

- Էկի, Սամփսոնի, Յեփրայեայ, Քարակայ, Քեղծօնի և այլոց սրբոց ճախաճարցնեն:
- 9/22 Ուր. ԳԶ. Պահեց:
- 10/23 Շք. ԳԿ. Եփեսոսի Ս. Ժողովոյն Երկու հարիր Հայրապետացն (431 թ.):
- 11/24 † Կիր. ԱԶ. Գ. կիր. զինի Վարդ.: Հրց. գկ. Անձառելին: Հմբ. աձ. Փառք յարութեան:
- Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոց:
- 12/25 Բշ. ԱԿ. Ա. օր Ասծ. պահոց: Հրց. ակ. Ջանձառ էութիւն:
- 13/26 Գշ. ԲԶ. Բ. օր Ասծ. պահոց:
- 14/27 Գշ. ԲԿ. Գ. օր Ասծ. պահոց:
- 15/28 Եշ. ԳԶ. Գ. օր Ասծ. պահոց:
- 16/29 Ուր. ԳԿ. Ե. օր Ասծ. պահոց:
- 17/30 Շք. ԳԶ. Տօն Շողակարի Մրբոյ էջմիածնի, ըստ տեսլեան Մրբոյն Գրիգորի Լուսառցնեն: Նախատօնակ:
- Ն ա ւ ա կ ա տ ի ք:**
- 18/31 † Կիր. ԳԿ. Վերափոխումն Ս. Աստուածածնի:  
(Միջոց ուժիքն երեք շաբաթ է):
- Անպտեմբեր**
- 19/1 † Բշ. ԱԶ. Բ. օր Վերափոխումն:
- Յիշատակ մեռելոց:

- 20/2 Գշ. ԱԿ. Գ. օր Վերափոխումն:
- 21/3 Գշ. ԲԶ. Գ. օր Վերափոխումն:
- 22/4 Եշ. ԲԿ. Ե. օր Վերափոխումն:
- 23/5 Ուր. ԳԶ. Գ. օր Վերափոխումն:
- 24/6 Շք. ԳԿ. Է. օր Վերափոխումն:
- 25/7 † Կիր. ԳԶ. Բ. կիր. զինի Վերափոխումն:
- 26/8 Բշ. ԳԿ. Թ. օր Վերափոխումն:
- 27/9 Գշ. ԱԶ. Մրբոյն Յովակիմայ և Անճայի՝ ծնողաց Մրբունոյ Աստուածածնի և Կանանց Խոպարերից:
- 28/10 Գշ. ԱԿ. Պահեց:
- 29/11 Եշ. ԲԶ. Մրբոյն Երեմիայի մարզարեին:
- 30/12 Ուր. ԲԿ. Պահեց:
- 31/13 Շք. ԳԶ. Մրբոյ առաքելոցն՝ Թովմայի, Յակովիք և Շմատնի:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

### (ՅՈՒ ՅՐ)

- 1/14 Ք. Կիր. Գև. Գ. կիր. զինի Վերափոխման: Գիտ գույոյ Մրգնական Աստվածածնի:
- 2/15 Բ. ԳԶ. Մրգն Ստեփանոսի Ռուբեցոյն և Մրգն վկայիցն՝ Գոհարինեայ, Մամիդէսի, Տուֆիկոսի և Խատիկոսի:
- 3/16 Գ. Գև. Մրգն մարգարիցն Եղեկիլի, Եզրի և Զաքարիայի՝ հօրն Յովինեան Մկրտչի:
- 4/17 Գ. ԱԶ. Պահի:
- 5/18 Ե. Ա. Մրցն Յովինեանու Կարապետին և Յորայ արդարոյն:
- 6/19 Ուր. ԲԶ. Պահի:
- 7/20 Շր. ԲԿ. Նիկոյ սուրբ Ժողովոյն 318 Հայրապետացն (325 թ.): Նախառօնակ:
- 8/21 Ք. Կիր. ԳԶ. Գ. կիր. զինի Վերափոխման: Տօն Նճճեան Մրգնական Կուտի Մարտիանու յԱննայէ: Բարեկենդան Ա. Խաչի պահոց:

## Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

- 9/22 Բ. Գև. Ա. օր Ա. Խաչի պահոց: Հրց.  
բկ. Ռու Հարցն մերոց Աստված:
- 10/23 Գ. ԳԶ. Բ. օր Ա. Խաչի պահոց:
